Camisorta Exclusiva
Gostanian Hnos.

Համաշխարհային Դրամատունը 3 Միլիոն Տոլար Կը Տրամադրէ Հայաստանին «Քորոնա» Ժահրին Դէմ Պայքարելու Համար

Արձագանգելով COVID-19 համավարակի արագ տարածման աշխարհի եւ վերջերս նաեւ Հայաստանի մէջ՝ Համաշխարհային դրամատունը կ'աջակցի «քորոնա» ժահրի բռնկման ընթացքին բնակչութիւնը պաշտպանելու ՀՀ կառավարութեան ջանքերուն: Այս մասին կը յայտնեն Հայաստանի մէջ Համաշխարհային Դրամատան գրասենեակէն:

ՀՀ առողջապահութեան նախարարութեան խնդրանքով՝ Համաշխարհային դրամատունը 3 միլիոն տոլար յատկացուցած է Հայաստանին՝ «քորոնա» ժահրի հաստատուած ախտորոշմամբ անձերուն անմիջական բուժօգնութեան համար անհրաժեշտ սարքերու եւ պարագաներու ձեռքբերման հրատապ կարիքները բաւարարելու համար: Այս միջոցները պիտի օգնեն «Հիւանդութիւններու կանխարգիլում եւ վերահսկում» ընթացիկ ծրագիրին ծիրէն ներս ձեռք բերելու թոքերու արհեստական օդափոխութեան 50 սարք՝ 1,35 միլիոն տոլար արժողութեամբ:

Գնումը պիտի իրականացուի արտակարգ իրավիճակներու մէջ Համաշխարհային Դրամատան արագացուած ընթացակարգերու կիրառումով: Համաշխարհային դրամատան տրամադրած նեղ մասնագիտական փորձագիտութեան շնորհիւ կատարուած է շուկայի արագ վերլուծութիւն՝ բուժարքերու համաշխարհային առաջարկի խիստ կրճատման եւ աճող գիններու պայմաններուն մէջ «արժէք դրամի դիմաց» սկզբունքը ապահովելու նպատակով: Իբրեւ արդիւնք, Հայաստանի առողջապահական համակարգը պիտի զինուի լրացուցիչ բարձրորակ սարքերով, որոնք անհրաժեշտ են «քորոնա» ժահր հիւանդութեան աւելցող հաստատուած դէպքերու բուժման համար:

«Այս յանկարծահաս իրավիճակին մէջ Դրամատունը պատրաստ է աջակցելու համավարակի ազդեցութեան մեղմացման նպատակով Հայաստանի արձագանգին», – նշած է

Համաշխարհային Դրամատան Հայաստանի գրասենեակի տնօրէն Միլվի Պոստոլոն: «Կ'ուզեմ բարձրաձայնել Հայաստանի բուժաշխատողներու աննախադէպ նուիրումը՝ ի պաշտպանութիւն բնակչութեան: Նաեւ կը յորդորեմ Հայաստանի բոլոր քաղաքացիներուն՝ ամենայն խստութեամբ հետեւելու արտակարգ իրավիճակի կանոններուն եւ պահպանելու հասարակական հեռաւորութիւնն ու կատարելու մեկուսացման քայլերը, որոնք ուղղուած են համավարակի ազդեցութեան փոքրացման»:

Նոյն մօտեցումը պիտի կիրառուի օդափոխութեան յաւելեալ սարքերու, ինչպէս նաեւ անձնական պաշտպանիչ սարքերու ձեռքբերման գործընթացին մէջ առողջապահութեան հրատապ կարիքները բաւարարելու նպատակով: Բացի այդ, Համաշխարհային Դրամատունը պատրաստ է վերածրագրաւորելու Հայաստանի մէջ իր ընթացիկ ծրագիրներու դիմագիծը՝ տարբեր ոլորտներու մէջ COVID-19-ին հակազդելու ՀՀ կառավարութեան ջանքերուն աջակցելու նպատակով:

Համաշխարհային Դրամատան ելեւմտական եւ արհեստագիտական օժանդակութիւնը սերտօրէն կը համակարգուի միւս միջազգային կազմակերպութիւններու եւ զարգացման ելեւմտական հաստատութիւններու օժանդակութեան հետ: Մասնաւորապէս, վերոնշեալ սարքերու գնումը պիտի իրականացուի անմիջականօրէն Միաւորուած ազգերու կազմակերպութեան գործակալութիւններու մատակարարման խողովակներով՝ հաշուի առնելով համաշխարհային շուկային մէջ անմիջական բուժօգնութեան այստեսակ սարքերու մասով առկայ սահմանափակումները:

Համաշխարհային Դրամատան խումբը գործողութեան մէջ կը դնէ 14 միլիառ տոլար արժողութեամբ արագ արձագանգման փաթեթ՝ զարգացող երկիրներու մէջ COVID-19-ի

(շաբ. էջ 9)

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Երուսաղեմ Տէր Յիսուս Քրիստոսի հաղթական մուտքի տօնը՝ Ծաղկազարդը



Առավոտեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ս. Տրդատի բաց խորանի առջեւ, կատարեցինք Անդաստանի արարողութիւն: Այս առիթով, աշխարհը եւ հայրենի մեր երկիրը պատուհասած համավարակի պայմաններում, ի մխիթարութիւն եւ ի բժշկութիւն ժողովրդի՝ դուրս բերուեց համաքրիստոնեական մեծագոյն սրբություններից մեկը՝ Սուրբ Էջմիածնում պահուող Աստուածամուխ Սուրբ Գեղարդը, որից սփռուող օրհնութեան ներքոյ հայցեցինք Տիրոջ հովանին համայն աշխարհին, մեր երկրին եւ ողջ ժողովրդին ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Օրհնութիւն Դարթի Որդուն, օրհնեալ է՝ Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութիւն՝ բարձունքներում»:
(Մատթ, ԻԱ 9)

Միրելի հավատացեալ զաւակներ Մեր, Այսօր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տօնախմբում է Ծաղկազարդը: Այս հոգեպարար տօնը նշում ենք Քրիստոսամուխ Սուրբ Գեղարդի աստուածային հրաշագործ ու բուժիչ գործութեան հայցով մեր ժողովրդի եւ ողջ մարդկութեան համար: Ծաղկազարդը, ինչպէս գիտեք, յիշատակն է Երուսաղեմ Փրկչի փառավոր մուտքի, երբ ժողովրդի բազմութիւնը ուրախութեամբ, ձիթենու եւ արմաւենու դալար ճիւղերը ձեռքներին դիմավորում էր մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ բացականչելով. «Օրհնութիւն Դավթի Որդուն, օրհնեալ է՝ Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութիւն՝ բարձունքներում»:
Քրիստոս բարձրանում էր Երուսաղեմ որպէս «գառն Աստծոյ», որ Իր կեանքը զոհաբերեց խաչի վրայ, Իր կենարար արեան հեղմամբ ազատագրեց մարդկութեանը մեղքի գերութիւնից եւ բացեց դէպի Աստուած տանող արքայութեան դռները: Ժողովուրդը դիմավորում էր Նրան որպէս յաղթական Թագաւորի, ով պիտի ազատութիւն բերեր օտար տիրապետութեան լծից: Սակայն Յիսուս մուտք էր գործում որպէս յաղթական Թագաւոր, ում անձի մէջ Աստծոյ խոստումները պիտի իրագործուէին, Նա պիտի յաղթեր մեղքին ու մահուանը՝ ինքնազոհաբերութեամբ: Աշխարհի փրկիչն ու թագաւորը, մարմնացեալ Աստծոյ Որդին, մահացաւ անարգ մահով խաչափայտի վրայ, որպէսզի Իր յարութեամբ մարդկանց շնորհի յաւիտենական կեանքի անգին պարգեւը: Այս մեծագոյն խորհուրդը դժուարընկալելի էր եւ տակաւին դժուարըմբռնելի է շատերի համար:

Միրելիներ, այսօր բոլորիս հոգիներում Ծաղկազարդի տօնի ուրախութեան ազնիւ զգացումներն են, բայց նաեւ՝ համայն աշխարհի եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած համավարակի մտահոգութիւնը: Յաւ ենք ապրում, որ Աւագ Շաբաթուայ այս նուիրական օրերին մեր հաւատաւոր զավակները չպիտի կարողանան եկեղեցիներում համախմբվել եւ միասնաբար անցկացնել եկեղեցական արարողութիւնները, սակայն Մեր հայրական հորդորն է, որպէսզի աղօթէք տանը, ընթերցեք Աւետարանը, յատկապէս Աւագ

(շաբ. էջ 10)

CASA Rivera Servicios Funerarios
Funeral Services

ATENDIENDO A LA COLECTIVIDAD ARMENIA DESDE 1936
Traslados nacionales e internacionales de féretros y urnas
Ventas de parcelas en cementerios privados
AV. CORDOBA 4902 (1414) Cap. Fed. TEL./FAX: 5411 4773-2800 y 4772-3288
e-mail: casarivera@fibertel.com.ar www.casarivera.com.ar

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Երուսաղեմ Տեր Յիսուս Քրիստոսի հաղթական մուտքի տօնը` Ծաղկազարդը

Շաբաթուայ ընթերցուածքները եւ հոգեւոր ապրումներով ու խոկումով լինէր մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ` Նրա երկրային կեանքի վերջին օրերի խորհրդին յաղորդ:

Աստուածամուխ Սուրբ Գեղարդից ճառագող օրհնութեան ներքոյ կատարեցինք Ծաղկազարդի անդաստանի արարողութիւնը` Մեր սրտում ունենալով մեր ողջ ժողովրդին, ի մասնավորի ապաքինման եւ մեկուսացման մեջ գտնուող Մեր զաւակներին եւ դժուարին այս իրավիճակի յաղթահարման համար իրենց նուիրեալ ծառայութիւնը բերող բոլոր անձանց: Ամենաբուժիչ Սուրբ Գեղարդով օրհնեցինք ձեզ, սիրելի հաւատաւոր զավակներ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս, որ գորանաք հավատով, յոյսով ու սիրով, որ Տերը քաջառողջութիւն շնորհի եւ ապահով պահի ու պահպանի ձեզ բոլորիդ, եւ փորձութեան այս օրերը յաղթահարէք Աստծոյ շնորհով, ողորմութեամբ եւ օգնականութեամբ: Մենք հաստատ համոզումն ունենք, որ Տերը ազատելու է մեզ վշտերից ու տառապանքներից, պարգեւելու է ուժ եւ կորով, որ կարող լինենք միասնութեամբ, համատեղ ջանքերով վերականգնել մեր բնականոն կեանքը: Հաւատաւոր զավակներ Մեր, Հայրապետիս հորդորն է ձեզ, որ այս գիտակցութեամբ աղօթէք, այս տեսլականով գործէք` յանուն ձեր ընտանիքների ապահովութեան, ձեր եղբայրների ու քոյրերի առողջութեան: Ամենայն լրջութեամբ խստագոյնս հետեւէք պատկան մարմինների հրահանգներին եւ կատարէք անհրաժեշտ բոլոր ցուցումները: Գիտենք, որ իւրաքանչիւրդ ներդրութիւնների էք դիմագրաւում, ենթարկվում հոգեբանական, առողջապահական, տնտեսական դժուարութիւնների, որոնց հանդիման առ Աստուած ապավինութեամբ կոփվում ու ամրանում են հավատքը, մերձաւորին սիրոյ եւ օգնութեան ձեռք մեկնելու, հայրենի պետութեան շուրջ համախմբվելու վեհ գաղափարները: Այս հանգամանքներում, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ, կոչ ենք ուղղում Մեր ժողովրդի զաւակներին հայրենիքում եւ սփիւռքում` ըստ կարելիութեան սրտաբուխ նուիրատվութիւն կատարել համավարակի դէմ պայքարի նպատակով բացուած պետական հաշուեհամարին` առկա իրավիճակով պայմանավորուած անմիջական կարիքներն ու անհրաժեշտութիւնները հոգալու համար:

Այս օրը սովորաբար, սիրելիներ, Մանուկների օրհնութեան առիթով մեր եկեղեցիները լի էին երեխաներով, նրանց ծպիտով ու ծիծաղով: Մենք այսօր աղօթեցինք նաեւ մանուկների առողջութեան, նրանց երջանիկ կեանքի եւ լուսաւոր գալիքի համար: Առանձնակի հոգածութեամբ ու հոգատարութեամբ խնամատարենք երեխաներին, շրջապատենք ամենայն սիրով ու գուրգուրանքով, սնենք ու դաստիարակենք ազգային, հոգեւոր մեր արժեքներով:

Սիրելի զաւակներ Մեր, տերունական այս սքանչելի տօնի առիթով ընդունելով Տիրոջը մեր սրտերում, փառաբանենք եւ օվսաննա վերառաքենք մեր Տեր Յիսուս Քրիստոսին` ասելով` «Օրհնեալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութիւն` բարձունքներում»: Ամուր մնանք մեր յոյսի ու հաւատքի մեջ առ Տերը, ով Իր կեանքն անգամ չխնայեց մեզ համար, Իր մահուամբ մահը խորտակեց եւ Իր Յարութեամբ մեզ հաւիտենական կեանք պարգեւեց: Նրան փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գիսակ Արքեպիսկոպոս Մուրատեանի խօսքը Սուրբ Զատիկի առիթով

Սիրելի Հաւատացեալներ

Այս տարի չկարողացանք տօնակատարել Ծաղկազարդի տօնը ինչպէս որ կարգն էր ու կանոնը մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ մեր Համայնքի աւանդութիւնը սուրբ Պատարագէն ետք կատարելու նաեւ ժողովրդական տօնախմբութիւնը: Պիտի չկարենանք նաեւ կատարել Աւագ Շաբթուան արարողութիւնները, (Աւագ Երեքշաբթիի «Տասը կոյսերու» արարողութիւնը, Աւագ Հինգշաբթիի ամբողջ օրուան արարողութիւնները «Սուրբ Պատարագի հաստատումը», Ոսկուայի եւ խաւարման կարգերը, Աւագ Ուրբաթի Թաղման կարգը, Աւագ Շաբթի Ճրագալոյցի Պատարագը) եւ պիտի մատուցենք միմիայն 12 ապրիլի կիրակի օրուան Զատիկական Սուրբ Պատարագը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի մէջ միայն, դոնփակ եւ առանց հաւատացեալներու ներկայութեան: Վստահաբար այս բոլորը մեր կամքով եւ ցանկութեամբ չէ, այլ պետական հրահանգ է որ ամբողջ երկիրը մնայ մեկուսացումի մէջ:

Մտահոգութեամբ կը հետեւինք «քօրօնա վիրուս»ի (corona virus, պսակաձէ ժահր) հետ կապ ունեցող եւ աշխարհի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն, որ շատ աւելի ծանր ու լուրջ է եւ մենք իբրեւ Համայնք ու Եկեղեցի պէտք էր հետեւէիք թէ Արժանթինի պետութեան եւ թէ նաեւ ՆՍՕՏՏ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամին, որ եկեղեցւոյ արարողութիւնները ըլլան դոնփակ եւ առանց հաւատացեալներու ներկայութեան: Զատիկական պատարագին հաւատացեալները կրնան հետեւիլ ֆէյսպուքի միջոցաւ:

«Չի եղեր գիշեր, որ չէ լուսցեր» կ'ըսէ ժողովրդական արածը: Վստահաբար այս ալ պիտի անցնի եւ մարդկութիւնը պիտի կարենայ յաղթահարել նաեւ այս դժուարին համաճարակին պահելով հանդարտութիւնը, հետեւելով բժիշկներու թելադրութեանց եւ գործադրելով պետական որոշումներն ու հրահանգները:

Կ'աղօթենք համայն աշխարհի մարդկութեան համար, խնդրելով Բարձրեալէն առողջութիւն, իմաստութիւն եւ խաղաղութիւն. իսկ մարդոց կը թելադրենք ու կը սպասենք հնազանդութիւն, յարգանք եւ հրահանգներու ու կանոններու գործադրութիւն:

Աստուած օրհնէ ու բոլորին տայ կարողութիւն յաղթահարելու այս դժուարութիւնը եւ աղօթքով ու Տիրոջ օգնութեամբ շարունակելու մեր բնականոն կեանքը:

Շնորհաւոր Սուրբ Զատիկ. Քրիստոս յարեալ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ

Գիսակ Արքեպս. Մուրատեան
Առաժնորդ Արժանթինի եւ Չիլէի Հայոց

Համաշխարհային Դրամատունը 3 Միլիոն Տոլար Կը Տրամադրէ Հայաստանին «Քորոնա» Ժահրին Դէմ Պայքարելու Համար

նկատմամբ հակազդումը զօրացնելու եւ վերականգնման փուլի հասնելու ընթացքը կրճատելու նպատակով: Անմիջական հակազդումը կը ներառէ նիւթական օժանդակութիւն, քաղաքականութեան մասով խորհրդատւութիւն եւ արհեստագիտական աջակցութիւն, որ երկիրներուն պիտի օգնէ յաղթահարելու համավարակի առողջապահական եւ տնտեսական հետեւանքները:

Միջազգային ելեւմտական ընկերակցութիւնը (IFC) 8 միլիոն տոլարի նիւթական աջակցութիւն կը տրամադրէ իբրեւ աջակցութիւն համավարակէն տուժած մասնաւոր ընկերութիւններու եւ աշխատատե-

ղերու պահպանման: Վերակառուցման եւ զարգացման միջազգային դրամատունը եւ Զարգացման միջազգային ընկերակցութիւնը (IBRD and IDA) նախնական 6 միլիոն ԱՄՆ տոլար կը յատկացնեն առողջապահութեան ոլորտի արձագանգման:

Քանի որ երկիրները աւելի ընդգրկուն աջակցութեան կարիք ունին, Համաշխարհային Դրամատան խումբը` 15 ամսուան ընթացքին` 160 միլիոն տոլար պիտի ներգրաւէ աղքատ ու խոցելի խաւը պաշտպանելու, գործարարութիւններուն աջակցելու եւ տնտեսութեան վերականգնման օժանդակելու համար:

**ASOCIACIÓN RESIDENTES ARMENIOS
MAR DEL PLATA**



**Tu casa en
Mar del Plata
te espera para
degustar nuestra
exquisita
comida típica**

**Abierto
Viernes y Sábados
por la noche**

11 de Septiembre 3680

Consultas y Reservas: (223) 473-9438

(223) 154-216 970 / (223)154 - 551 521

BIENESTAR EMOCIONAL

Resistiré

Si yo les dijera que la canción que hoy se ha transformado en himno de la cuarentena por la pandemia, fue interpretada por el llamado Dúo Dinámico, crearán que estoy bromeando.

La música de “Resistiré” fue creada por uno de los integrantes de este grupo popular español, llamado Manuel de la Calva y Carlos Toro Montoro, periodista deportivo y músico, la letra. Esto ocurrió en 1988 y desde entonces, no ha dejado de sonar. Se hizo famosa en España cuando Pedro Almodóvar la incluye en su película “Átame”, interpretada por Antonio Banderas, Lola Cardona y Victoria Abril. Un filme muy nominado a los premios Goya que no obstante por estas cuestiones de los prejuicios no obtuvo galardones.

En nuestro país en el año 2002, en ocasión de una enfermedad que padecía la cantante Estela Raval, mientras se reponía comenzó a trabajar sobre la canción y recuperada en el verano de 2003- estrenó la misma, como motivador ejemplo de la lucha por vencer el cáncer de mamas. Más tarde, en abril de ese mismo año la tira del canal Telefé que se llamó Resistiré le dio un nuevo impulso en la voz de David Bolzoni, tira que tuvo un gran auge por la participación de sus actores y por la situación que sufría por entonces la Argentina. En ocasiones, todo se repite.

No venía mal esta introducción para este tema que hoy suena desde distintos espacios y que vale decir que muchos cantantes unidos, en gesto solidario, han grabado una nueva versión, habiendo otorgado los autores, los derechos a la Comunidad de Madrid para colaborar con los efectos sanitarios de la crisis.

La letra nos recuerda que ante cualquier circunstancia “...Resistiré, erguido frente a todo...” “...Resistiré, para seguir viviendo, Soportaré los golpes y jamás me rendiré...”. Bien vale en estos días refrescar la letra y a conciencia leerla desde el comienzo hasta el final, o cantarla si están dotados de la emoción necesaria para que se evoquen en el ser, momentos, muchos seguros, de los que todos hemos salido airoso de batallas interna y externas. Hoy resistir frente a los efectos del Covid-19 significa perder el miedo a aquello desconocido pero evidente que no cesa de extenderse en el mundo para crear a la vez que terror, conciencia. Es extraña la vida, y los mensajes universales no siempre son del todo lineales; se necesita abrir el alma para poder interpretarlos.

Resistir significa recibir una fuerza extraña que empuja, que ejerce presión sobre uno y sin embargo poder mantenerse firme sin perder la forma o sin sufrir daño. Agregaría, que quedar con el menor daño posible ya muestra haber resistido, y haber aprendido qué cosas nos sobran, o nos faltaron, por si nos toca otra circunstancia para ofrecer resistencia.

Tal vez por esto último, los mayores adultos sean más pacientes en la cuarentena. Ya han sentido distintas presiones durante la vida, ya desecharon y todavía hay ánimo de aprender. En esta ocasión, solo se nos pide estar en un lugar conocido, seguro en la mayoría de los casos y rodeado de mucho, aunque no de los afectos cercanos al abrazo y el beso. Todo no se puede, y hasta que pase lo peor es mejor resistir, como dice la canción, para seguir viviendo.

Pensaba en la resistencia como una metáfora de un bloque duro que no admite fisuras, porque si las tuviera visibles sería más fácil de derribar. Unía esta idea a los hombres y mujeres que hoy resisten al

miedo lógico que se produce ante lo desconocido, y que no encuentra hacia donde huir, porque lo van a encontrar en todos lados.

Entonces lo mejor es hacernos bloque, para colaborar y motivar a aquellos bloques que componen los sanitarios y servicios públicos que también son humanos. Fortalecernos, pero no de cemento, sino de aquellos elementos que tenemos disponibles en la naturaleza y que conforman nuestra esencia humana.

El bloque humano se fortalece y resiste mejor cuando los elementos básicos de la naturaleza Tierra, Agua, Aire y Fuego, se coordinan generando una conexión con los seres humanos en lo físico, mental, emotivo y espiritual. De forma invisible se crea un tejido de sostén que elimina el miedo y acrecienta el amor trascendente.

La Tierra está relacionado con lo físico, si bien en la cuarentena no podemos salir a andar, podemos considerar nuevas estrategias para cuidar nuestro cuerpo: respirar con conciencia, cuidar nuestra alimentación, ejercitar alguna actividad con tutoriales con ejercicios sencillos o bailes. Pisar fuerte, enraizar y dejar que todo lo negativo vaya al centro de la tierra con unos pequeños zapateos, claro está que podemos tener vecinos en el piso de abajo, seguramente sabrán comprender.

El elemento Aire, está relacionado con el nivel mental, el pensamiento. Aquí podemos fortalecernos desarrollando habilidades mentales, por ejemplo crucigramas, o juegos; ayudarnos con la reflexión de las cosas que escuchamos logrando hacer distinciones entre lo que es lógico y lo que es tóxico; escuchar para aprender y reflexionar, no para repetir sin fundamento. Poner un punto a la información y ocupar el pensamiento con acciones creativas.

Para fortalecer las emociones, debemos poner un poco más de empeño. El elemento Agua, corresponde a los sentimientos y estos deben fluir. La queja, la angustia, el pararse en lo que no puedo hacer, en lugar de lo que sí estoy haciendo es de fundamental importancia. Por más que siempre lo intentamos, no logramos desapegarnos. Por un tiempo y también como ejercicio de aprendizaje, debemos comprender que el amor a nuestros seres queridos y vínculos hoy se expresa de manera diferente, sin contacto físico. Por suerte, la vida nos permite otras situaciones que nos habilitan mantener los afectos y crear nuevas oportunidades de interacción con personas. Es hora de empatizar más y mejor, de tener no solo acciones solidarias, sino sentimientos adaptables, que nos conduzcan a soltar las pasiones sobre aquello que “nos pertenece” para unirnos a emociones de carácter universal.

El elemento Fuego puede quemar o puede dar cuenta de la expansión, de la alegría, del brillo que necesitamos, la llama que no debe apagarse y que necesita del regocijo anclado en el alma, de la Oración, del espíritu que se alimenta con la lectura, con las historias contadas en familia o con amigos por chat.

En estos días, debemos ser un bloque que resiste, que le hace frente a cualquier pequeña línea que intenta debilitarlo, y que si no puede solo, sabe buscar ayuda para recomponerse, porque lo dice también la letra: “...Soy como el junco que se dobla, Pero siempre sigue en pie...”

#yomequedoencasa

Clr. Cristina Inés Papazian
cristinapapazian@gmail.com

IGLESIA APOSTOLICA ARMENIA ARQUIDIOCESIS DE LA ARGENTINA



Comunicado del Arzobispado

Comunicamos a nuestros creyentes que, por los motivos de público conocimiento y ajenos a nuestra voluntad, las iglesias de nuestra comunidad en Buenos Aires mantendrán sus puertas cerradas y se celebrará la Santa Misa de Eucaristía solamente en la Catedral San Gregorio El Iluminador el domingo 12 de abril, día de la Pascua de Resurrección, sin la presencia de fieles.

Actualmente, todo el mundo está sufriendo por causa del Coronavirus. Armenia y el pueblo armenio no han quedado exentos de la pandemia.

Deseamos y rogamos al Señor que con su ayuda los gobiernos y los líderes mundiales encuentren la solución para controlar el virus y que los ciudadanos, estén donde estén, sigan las indicaciones y ejecuten las órdenes.

Teniendo en cuenta la situación, reiteramos a nuestros creyentes, que en Argentina y por instrucciones gubernamentales se ha decidido un tiempo de aislamiento hasta el 12 de abril en principio. Por tal motivo las iglesias de nuestra comunidad permanecerán cerradas y no se celebrarán las ceremonias correspondientes de estas fechas:

- Del 6 al 11 de abril durante toda la Semana Santa
- 13 de abril, Día de los Difuntos

La Santa Misa de Eucaristía del Domingo de Pascua de Resurrección, domingo 12 de abril, se realizará sin público en la catedral San Gregorio El Iluminador y nuestros fieles la podrán seguir a través de internet en las páginas de Facebook de la Iglesia Apostólica Armenia Arquidiócesis de Argentina y del Centro Armenio de Argentina.

Deseando salud y la bendición de Dios a todos nuestros fieles y creyentes les decimos: Cristo ha resucitado de entre los muertos. Bendita sea la Resurrección del Señor.

Con mis mejores augurios y bendiciones,

Arzobispo Kissag Mouradian
Primado de la Iglesia Apostólica Armenia para Argentina y Chile

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու կը տեղեկացնենք մեր հաւատացեալներուն որ կամքէ անկախ եւ հանրաժանօր պատճառներով մեր Թեմի եկեղեցիները Աւագ Շաբթուայ ընթացքին փակ պիտի մնան եւ Սուրբ Պատարագ պիտի մատուցուի 12 Ապրիլին, Զատիկի օրը միայն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, եւ առանց հաւատացեալներու ներկայութեան: Այսօր ողջ աշխարհը կը տառապի պսակաւոր ժահրի (Coronavirus) պատճառով եւ այս համաճարակէն զերծ չմնաց նաեւ մեր ժողովուրդը, թէ Հայաստան եւ թէ սփիւռս աշխարհի: Կը յուսանք եւ կ'աղօթենք, որ Աստուծոյ օգնութեամբ մարդկութիւնն ու պետութիւնները պիտի կարենան վերահսկել կացութեան եւ իրաքանչիւր քաղաքացի, ուր ալ գտնուի պիտի հետեւի իշխանութեանց ցուցմունքներուն եւ գործադրէ հրահանգները:

Նկատի ոնենալով այս կացութիւնը մեր հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ Արժանթինի մէջ եւ պետական հրահանգով ինքնամեկուսացման շրջան որոշուած է մինչեւ Ապրիլ 12-ի ուրբաթ օր: Ուստի այս իմաստով մեր Թեմի եկեղեցիները փակ պիտի մնան եւ արարողութիւն տեղ պիտի չունենայ հետեւեալ օրերուն.-

- Բ.- Ապրիլ 6- Էն 11 ամբողջ Աւագ Շաբթուան ընթացքին
- Գ.- Ապրիլ 13 Ֆիշատակ Մեռելոցի օրը

Զատակական Պատարագին, մեր հաւատացեալները կրնան հետեւիլ ֆէյսպուքով:

Մեր հաւատացեալներուն առողջութիւն եւ երկար կեանք մաղթելով կ'ըսենք Ձեզ եւ մեզ մեծ աւետիս Քրիստոս Յարեալ ի մեռելոց: Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Քաջառողջութեան լաւագոյն մաղթանքներով եւ օրհնութեամբ

Գիսակ Արքեպս. Մուրատեան
Առաջնորդ Արժանթինի եւ Զիլէի Հայոց

CENTRO ARMENIO DE LA REPUBLICA ARGENTINA

A la comunidad

Estimados miembros de nuestra comunidad:

Con motivo del Aislamiento Social Preventivo y Obligatorio dispuesto por el Gobierno Nacional, el Centro Armenio de la República Argentina se encuentra momentáneamente sin atención al público hasta la fecha en que se estipule la finalización de la cuarentena obligatoria. No obstante, el área administrativa del establecimiento se encuentra operativa mediante la modalidad de home office y estamos a disposición ante cualquier consulta. Los medios de contacto son los siguientes:

TELEFONOS DISPONIBLES:

Whatsapp: 1150150203

Teléfonos de guardia: 4772-3558 / 2339

MAILS:

Administración:

iaia.adm@hotmail.com

info@centroarmenio.com.ar

Cementerio:

marianacementerio@yahoo.com

Iglesia:

arzobispadoarmenio@gmail.com

Muchas gracias.

Centro Armenio de la República Argentina

Dr. Eduardo Dante Asilian, su fallecimiento

El sábado 4 del corriente sorprendió y conmovió a la comunidad el fallecimiento del conocido abogado y dirigente comunitario, Eduardo Dante Asilian.

Nacido en 1943 en el seno de una familia muy consustanciada con los valores culturales y nacionales armenios, Dante aplicó todo ese caudal de sentimientos y conocimientos adquiridos de sus padres, Iervant y Dicranuhí, desde su infancia, en distintas instituciones y comisiones de nuestra comunidad.

Había recibido su instrucción primaria en la escuela Iervant Khachikian de Valentín Alsina y particularmente, sus conocimientos de idioma armenio, en la escuela dominical de la Unión General Armenia de Beneficencia, cuando la institución funcionaba en una vieja casona en su actual dirección de Armenia 1322.

Su vocación de servicio lo hizo acercarse a la U.G.A.B., donde se integró a comisiones juveniles a fin de servir a los ideales de la institución y de la comunidad.

Esa misma vocación lo llevó también a la reorganización de la biblioteca de la Liga de Jóvenes, para la que promovió el incremento cuantitativo y cualitativo de libros en distintos idiomas con más de 2.000 volúmenes. Considerando su interés, conocimientos y voluntariado, Dante fue designado director de la biblioteca "Hapet y Mairanush Missakian", cargo que ejerció en forma desinteresada por espacio de diez años. En ese período promovió la formación de una comisión de biblioteca, que organizaba conferencias periódicas en armenio y en castellano relativas a obras que la conformaban.

Entre las décadas del 60 y del 70, Dante también integró la Comisión Directiva de la Unión Estudiantil Djrún de la Unión Cultural Sharyum del Partido Social Demócrata Henschakian y, más tarde, fue miembro de la Comisión Directiva de dicha entidad.

En 1984, precisamente, como representante del partido Social Demócrata Henschakian, fue cofundador de la Asamblea Interinstitucional Armenia de la República Argentina, con el objeto de obtener el reconocimiento internacional del genocidio armenio ante las Naciones Unidas, a través de su tratamiento en la Subcomisión de Derechos Humanos de la ONU, en la que se obtuvo la inclusión de un párrafo referido al genocidio gracias al trabajo de los enviados argentinos, entre los que estaba el embajador Leandro Despouy.

El Dr. Asilian también fue cofundador del Consejo Profesional Argentino-Armenio e integrante del Consejo Argentino-Armenio de la Paz. Simultáneamente integró la Comisión Directiva de la Iglesia "Surp Hagop" de Valentín Alsina.

Al finalizar sus estudios de la Facultad de Derecho de la U.B.A., Dante ofreció sus



En la entrada de la U.G.A.B., junto al busto de Boghós Nubar.

servicios profesionales ad honorem a distintas instituciones de la comunidad, tales como la U.G.A.B., de la que integró luego el Consejo Directivo y más tarde, la Comisión de Legales.

La cercanía con la institución lo llevó a investigar a fondo su vida y obra, que se vio reflejada en el libro "La entidad", dedicada a la historia de la filial Buenos Aires de la U.G.A.B., que lo distinguió como "Miembro Honorario".

El autor señaló que "este trabajo constituye, precisamente, una suerte de retribución hacia la Unión General Armenia de Beneficencia por la influencia moral" que la institución le brindó durante toda su vida comunitaria.

Dante incursionó además en otros trabajos de investigación y periodísticos. Tras colaborar con notas para el semanario "Sharyum" de la Unión Cultural homónima, fue designado director de esa publicación, cargo que ejerció por más de una década y por el cual viajó a Armenia en 1986, para participar en el Congreso Internacional de Periodismo Armenia-Diáspora.

También escribió artículos para "Le Monde Diplomatique", particularmente referidos al genocidio de armenios y a política internacional. Otras obras de su autoría son "Consecuencias Jurídicas y Económicas del Genocidio Armenio" (1984), "El problema del desarme nuclear", (1987), "Cien años de gloria del Partido Social Demócrata Henschakian, (1988), "Perestroika y Glasnost: dos caminos de una nueva revolución" (1991) y "El problema del Karabagh Montañoso" (1991), "El Karabagh Montañoso: nudo gordiano del Cáucaso que no se desata" (2019).

Con todo esto, Dante Asilian realizó una enorme contribución a una comunidad, que le dio su reconocimiento sincero y hoy lamenta su pérdida, porque aun tenía mucho que aportar.

Siempre sostenido de manera incondicional por su esposa, Cristina Khandjian, y sus hijos, Eduardo Luciano y Maximiliano Manuel, Dante fue un fervoroso dirigente de la U.C.A. Sharyum, que con su desaparición física pierde a uno de sus referentes, y la comunidad, a uno de sus féreos colaboradores.

Que con el consuelo a sus familiares y amigos, Dios dé eterno descanso a su alma. ¡Vartgued gadár, Dante! Se va a extrañar tu presencia.

#DÓNDEESTÁARSHAK**YA LLEVA UN AÑO DESAPARECIDO**

SI TENÉS INFORMACIÓN COMUNICATE
POR TELÉFONO 4309-9700 INT. 234153
O POR WHATSAPP 1158214001



Arshak Karhanyan es un joven de 27 años que está desaparecido desde el 24 de febrero. Estudia en la Universidad Tecnológica Nacional y trabaja en la Policía de la Ciudad de Buenos Aires. Según consta en la causa, el día de su desaparición Arshak se reunió con un compañero de la Policía, el oficial primero Leonel Alejandro Herba. De acuerdo con las declaraciones de Herba, hablaron sobre una posible compra de un auto por parte de Arshak, algo que no se correspondería con el estado financiero de la familia. Las últimas imágenes de Arshak fueron de él entrando a un supermercado Easy y comprando una pala.

La investigación la lleva adelante la Fiscalía en lo Criminal y Correccional N°2 a cargo del fiscal Dr. Santiago Vismara. El Ministerio de Seguridad lanzó recientemente una recompensa de medio millón de pesos para aquellos que brinden datos útiles que permitan dar con su paradero. Para brindar información, se puede comunicar por teléfono al 4309-9700 int. 234153 o por celular o Whatsapp al 1158214001.